YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ www.ysu.am, board@ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2022 թ. ապրիլի 22-ին տեղի ունեցած թիվ 6 առցանց նիստի

ՀՀ, ք. Երևան 22.04.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թվականի ապրիլի 22-ին տեղի ունեցավ Հոգաբարձուների խորհրդի հարցման կարգով արտահերթ նիստը: Նիստին մասնակցեցին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 19-ը (կից ներկայացվում են Խորհրդի 19 անդամների համաձայնությունները):

Նիստը նախագահում էր ՀԽ նախագահ Սուրեն Պապիկյանը, քարտուղարում՝ ՀԽ քարտուղար Եղիշե Կիրակոսյանը:

Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ առաջարկության ընդունում և հայտի ներկայացում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե:
2. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Երկրաֆիզիկայի ու Ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպելու Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի և հաստատել վերակազմակերպումը:

3. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Աստվածաբանության ու Հայ եկեղեցու պատմության և Եկեղեցաբանության ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպելու Աստվածաբանության և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի և հաստատել վերակազմակերպումը:
4. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար) ու Ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպելու Ռուսաց լեզվի ամբիոնի և հաստատել վերակազմակերպումը:
5. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու Ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպելու Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի և հաստատել վերակազմակերպումը:
6. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Ընդհանուր լեզվաբանության և Հայոց լեզվի պատմության ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպելու Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի և հաստատել վերակազմակերպումը:
7. Ընդունել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2022 թվականի ապրիլի 7-ի առաջարկությունը Սփյուռքագիտության ամբիոնը միացնելու Հայոց պատմության ամբիոնին և հաստատել վերակազմակերպումը:
8. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումները և փոփոխությունները:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ առաջարկության ընդունում և հայտի ներկայացում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե:

Առցանց եղանակով 1-ին հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի 4-րդ կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Ներկայացնել հայտ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով

հանձնված տարածքների մի մասի ուղղակի ձևով վարձակալության տրամադրման վերաբերյալ:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի երկրաֆիզիկայի ու ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնները միաձուլման եղանակով երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 2-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի երկրաֆիզիկայի ու ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնները միաձուլման եղանակով աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 3-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը հայ եկեղեցու պատմության ամբիոնի:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար) ու ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) ամբիոնները միաձուլման եղանակով ռուսաց լեզվի ամբիոնի վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 4-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար) ու Ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը Ռուսաց լեզվի ամբիոնի:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնները միաձուլման եղանակով ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 5-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնները միաձուլման եղանակով հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 6-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի:

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սփյուռքագիտության ամբիոնը միացման եղանակով Հայոց պատմության ամբիոնին վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 6-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0**:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սփյուռքագիտության ամբիոնի միացման եղանակով վերակազմակերպումը հայոց պատմության ամբիոնին :

8. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումների ու փոփոխությունների հաստատում:**

Առցանց եղանակով 8-րդ հարցը դրվեց քվեարկության. **կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0**:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5)-րդ և 6)-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի 18-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումներն ու փոփոխությունները:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ե. Կիրակոսյան**